ՏԵՂԵԿԱՆՔ

Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ

Հոդված 5. Հաշվեքննիչ պալատի լիազորությունները

2. Հաշվեքննիչ պալատն ստուգում չի իրականացնում այն իրավաբանական անձանց մոտ, որոնց վերապահված են պետական կամ տեղական ինքնակառավարման գործառույթներ, և դրանց իրականացումը չի ֆինանսավորվում պետական կամ համայնքային բյուջեներից: Հաշվեքննիչ պալատը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հաշվեքննության շրջանակում ստուգում է իրականացնում իրավաբանական անձի մոտ, եթե՝

1) ոչ առևտրային իրավաբանական անձը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից.

2) առևտրային իրավաբանական անձի կանոնադրական կապիտալի 50-ից ավելի տոկոսը պետական կամ համայնքային մասնակցությամբ է.

3) իրավաբանական անձին իրավական ակտով և պայմանագրով վերապահվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի գործառույթների իրականացում՝ պետական կամ համայնքային բյուջեների միջոցների հաշվին՝ միայն սույն կետով նախատեսված իրավական ակտի և պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար~~, եթե դրանցով նախատեսված է նման ստուգման հնարավորություն~~.

4) իրավաբանական անձը պայմանագրով ստացել է պետական բյուջեից վարկեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական երաշխիքով ապահովված վարկեր կամ այլ ֆինանսական միջոցներ, միայն այդ միջոցների օգտագործման հետ կապված՝ սույն կետով նախատեսված պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար~~, եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն~~.

5) իրավաբանական անձը պայմանագրով պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների կողմից ստացել է դրամաշնորհներ կամ սուբսիդիաներ, միայն այդ միջոցների օգտագործման հետ կապված՝ սույն կետով նախատեսված պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար~~, եթե այդ պայմանագրով նախատեսված է նման ստուգման հնարավորություն:~~.

6) իրավաբանական անձը «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համաձայն և պայմանագրով հանդիսանում է կարգավորվող անձ, միայն հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման մասին օրենսդրության և պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար.

7) իրավաբանական անձը իրավական ակտով և հավատարմագրային կառավարման պայմանագրով հանդիսանում է պետական և(կամ) համայնքային սեփականության (գույքի) հավատարմագրային կառավարիչ, միայն հավատարմագրային կառավարման հետ

կապված՝ սույն կետով նախատեսված իրավական ակտի և պայմանագրի պահանջների կատարումն ստուգելու համար:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ~~1-ին մասով, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով~~ սահմանված դեպքերում հաշվեքննիչ պալատն իրավասու է համապատասխանաբար հաշվեքննություն, ստուգում (այսուհետ՝ նաև հաշվեքննություն) իրականացնելու ինչպես հաշվեքննության օբյեկտում, այնպես էլ հաշվեքննիչ պալատի աշխատավայրում: ~~Սույն հոդվածի 2-րդ մասի 3-5-րդ կետերով սահմանված դեպքերում հաշվեքննիչ պալատը հաշվեքննությունն իրականացնում է իր աշխատավայրում՝ համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Սույն հոդվածի 2-րդ մասի 3-5-րդ կետերով նախատեսված իրավաբանական անձանցից հաշվեքննիչ պալատն իրավասու է փաստաթղթեր կամ տեղեկատվություն պահանջելու միայն այն դեպքում, երբ դրանք հասանելի չեն դառնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:~~

Հոդված 32. Հաշվեքննության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը

1. Հաշվեքննիչ պալատին առցանց հասանելի են սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված հաշվեքննության օբյեկտներին պատկանող պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցներին, ստացված փոխառություններին ու վարկերին, պետական և համայնքային սեփականության օգտագործմանն առնչվող էլեկտրոնային շտեմարանները~~, բացառությամբ օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվության~~:

Հոդված 36. Հաշվեքննողի լիազորությունները

1. Հաշվեքննողն իրավասու է տվյալ ծրագրային կետի շրջանակներում՝

1) իրականացնելու հաշվեքննություն.

2) հաշվեքննության օբյեկտի ղեկավարից կամ նրան փոխարինող անձից պահանջելու հաշվեքննության առարկային առնչվող առկա էլեկտրոնային շտեմարանների հասանելիություն, փաստաթղթեր, անհրաժեշտ տեղեկանքներ, տեղեկատվություն, հաշվապահական հաշվետվություններ, դրանցից դուրս գրելու տեղեկություններ և ստանալու պարզաբանումներ: Օրենքով գաղտնիք համարվող տեղեկատվությանը հաշվեքննողը կարող է ծանոթանալ տվյալ գաղտնիքի համար օրենքով սահմանված ~~դեպքում և~~ կարգով: Անձնական տվյալներ պարունակող տեղեկատվությանը հաշվեքննողը կարող է ծանոթանալ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ.